*Լավությո՛ւն արա՝ ջո՛ւրը գցիր…*

# ԲԱՐԵԳՈՐԾ

**BAREGORTS** 2016, հուլիս-օգոստոս, № 32 **БАРЕГОРТС**

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՌԱՄՍՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ՊՈՒՐԱԿՆԵՐ ՈՒ ԾԱՌԱՍՏՈՒՆԿ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ




**Այսպես հիմնվեց Հայաստանի անկախության 25-ամյակի պուրակը**

Դարերի հոլովույթում իր երբեմնի հզոր պետականությունը կորցրած հայությունը ոչ միայն սպասում, այլև աշխարհի չար ուժերի դեմ ոգի ի բռին մաքառում էր անկախության վերականգնման, ազատ ու միացյալ Հայաստան ստեղծելու համար: Օսմանյան Թուրքիայի սուլթանների կազմակերպած պարբերական ջարդերի և առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի իրականացրած ցեղասպանության հետևանքով միլիոնավոր զոհեր տված մեր ժողովուրդն իր մեջ ուժ գտավ դիմակայելու 1918 թ. մեր երկիրը նվաճելու եկած թուրք հրոսակներին: Սարդարապատում, Ղարաքիլիսայում և Ապարանում թուրքերի դեմ տարած հաղթանակին հաջորդեց Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը, որին, ցավոք, աշխարհաքաղաքական բարդ հանգամանքներում վիճակված էր ընդամենը երկուսուկես տարվա գոյատևում: Հայոց պատմության ցավալի էջերից մեկն էր նրա կործանումը, որ բոլշևիկներն իրենց հաղթանակը համարեցին շուրջ յոթ տասնամյակ, և հետո նրանց ստեղծած երկրորդ հանրապետությունն էլ մնաց իր ձեռքբերումներով ու իր արատներով պատմության գիրկն անցավ՝ թողնելով նաև տխուր հետևանքներ: 1991 թ. խորհրդային կարգերի փլուզումից հետո նրա տարածքում հաստատվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը, որը և մեր ժողովուրդը օրինական հպարտությամբ հռչակել է անկախ Հայաստանի Հանրապետություն:

Խորհրդային իշխանությունների թույլ տված մեծ անարդարություններից էր պատմական Հայաստանի 10-րդ նահանգ Արցախի ու Նախիջևանի՝ նորահորջորջ Ադրբեջանի խորհրդային պետությանը բռնակցելը: Նախիջևանն իսպառ հայաթափվեց ու ադրբեջանականացվեց խորհրդային պետականության պայմաններում: Արցախին սպասում էր նույն ճակատագիրը, եթե մնար Ադրբեջանի կազմում: Հայության նոր սերունդներին էր վիճակված այդ սխալի շտկումն ու պատմական արդարության վերականգնումը:

Դժվարին էր այս գործընթացը. 1988-ի փետրվարին սկսվեց ու թափ առավ Արցախյան ազատագրական շարժումը, որին Ադրբեջանը խորհրդային ու թուրքական հովանավորությամբ հակադարձեց սումգայիթյան եղեռնագործությամբ, տարատեսակ բռնություններով ու սպառնալիքներով, Բաքվի, Կիրովաբադի և հայաշատ մյուս բնակավայրերի «մաքրագործմամբ»՝ հարյուր հազարավոր հայերի բռնի արտաքսելով: Աղետավոր երկրաշարժից դեռ ուշքի չեկած՝ հանրաքվեով ադրբեջանական գերությունից քաղաքակիրթ ինքնորոշմամբ ազատագրվելու ուղին բռնած Արցախին ու նորանկախ Հայաստանին պարտադրվեց անցանկալի պատերազմ: Ռազմական ճանապարհով Արցախը բռնազավթելու և վերատիրելու թշնամական փորձերը տապալվեցին, ջախջախված թշնամին, ավելի ծանր կորուստները կանխելու նպատակադրմամբ, 1994 թ. Մայիսի 12-ին մեծ տերությունների միջնորդությամբ խնդրեց հրադադար, որ հակամարտ զորքերի շփման գծում և Հայաստանի սահմաններում արդեն 22 տարի հենց ինքն է խախտում ծանր զրահատեխնիկայով ու վարձկան դիպուկահարներով, տարբեր, անգամ խոշոր տրամաչափի՝ միջազգայնորեն արգելված զանգվածային ոչնչացման զինատեսակներ կիրառելով, փոքր ու լայնածավալ դիվերսիոն գործողություններով, իսկ այս տարվա ապրիլի 2-5-ին՝ նախահարձակ նոր լայնածավալ պատերազմով: Եվ դարձյալ արցախյան պաշտ-

պանական բանակի հակահարձակմանը չդիմանալով՝ ռուսական, թուրքական ու իսրայելական ամենաարդիական զանգվածային ոչնչացման գերհզոր զենքերով զինված, թուրք զորահրամանատարների և հրահանգիչների ցուցումներով նախահարձակ թշնամին, մեծաքանակ զոհեր տալով, հարկադրված եղավ դարձյալ հրադադար խնդրել, որպեսզի, ինչպես երևում է, ժամանակ շահի և պատրաստվի նոր լայնածավալ ագրեսիայի ու դիվանագիտական խարդախ հաղթանակների:: Ապացույցը՝ իրենց իսկ սանձազերծած նախորդ երկու պատերազմներում էլ իրականում ջախջախված ու պարտված թշնամու՝ Արցախի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում ու հատկապես Նախիջևանում ծանր տեխնիկայով ու հույժ արդիական զինատեսակներով և շուրջ 25 000 զինվորներով վերջերս իրականացված ազերի - թուրքական ապակայունացնող համատեղ ցուցադրական զորավարժություններն են՝ պարզ է՝ ի՛ նչ նպատակով և ո՛ւմ դեմ:

Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ա. Սիմոնյանի գլխավորությամբ ուսանողներից, երիտասարդական կազմակերպությունների ղեկավարներից և պրոֆեսոր-դասախոսներից կազմված խումբը հերթական անգամ Արցախում էր մարտի 18-20-ին, այսինքն՝ ապրիլյան պատերազմից ընդամենը 10 օր առաջ: Բոլորն էլ գիտեին ադրբեջանցիների խարդախ ու նենգադավ նկրտումները, սակայն ոչ ոք չէր կռահում անկանխատեսելի թշնամու՝ խաղաղ բնակչության դեմ տմարդի նոր ոտնձգությունների ժամանակացույցը:

Ի դեպ, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը գոհունակություն հայտնեց ԵՊՀ ղեկավարությանը՝ դեռ նախորդ դարի երկրորդ կեսից ազատագրական պայքարի նախապատրաստման ժամանակներից ի վեր Արցախի խնդիրները ուշադրության կենտրոնում պահելու, նրա ազտագրման իրականացման, պետականության կայացման ու ամրապնդման, պաշտպանունակության զորացման հարցերում համակողմանի օգնություն, Արցախի հերոսական պաշտպանների հետ պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ շփումների համար: Ճշգրտվեցին համալսարանականների նոր անելիքները ապագա համագործակցության ոլորտներում: Եռօրյա ծրագիրն այս անգամ էլ բավական հագեցած էր: Առաջին իսկ օրը՝ մարտի 18-ի երեկոյան, կայացավ ԵՊՀ պատվիրակության հանդիպումը նախագահ Բակո Սահակյանի հետ: Նրա նստավայրում կայացավ Արցախի Հանրապետության ներկա վիճակի, Արցախի անվտանգության երաշխավոր Հայաստանի Հանրապետության հետ տնտեսական, ռազմաքաղաքական, գիտական ու հոգևոր-մշակութային անխզելի կապերի ամրապնդման, զանազան ոլորտներում հայոց մայր բուհի հետ տարաբնույթ համագործակցության զարգացման հնարավորությունների համակողմանի քննարկում:

Մարտի 19-ին համալսարանականները մեկնեցին ԼՂ Մարտակերտի շրջան: Պրոֆեսոր դասախոսներն այցելեցին սահմանապահ զորամասեր՝ զինվորներին հետաքրքրող ռազմահայրենասիրական թեմաներով և Հայաստանի անկախության 25-ամյակի ու Արցախի Հանրապետության օրախնդիր հարցերի շուրջ բանախոսելու:

Նկատվում է իրապես տխուր, բայց և հետաքրքիր մի օրինաչափություն: Դեռ նոր է բոլորում Արցախյան պատերազմում 22 – 24 տարի առաջ նահատակված հերոսներից շատերի հիսուն տարին: Հայաստանի Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի հիսնամյակի պուրակը անցյալ աշնանը հիմնվեց Բերձորում, Վարդան Ստեփանյանի (Դուշման Վարդան) և շատ-շատերի հոբելյանը դեռ նոր պիտի լրանա…



Մեռելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի….

Արցախ կատարած այս աշխատանքային ուղևորության ընթացքում ԵՊՀ ասպիրանտ, զոհված լրագրող-ազատամարտիկ Նորայր Մարությանի անունով մարտի 19-ին հիսուն ընկուզենիների պուրակ հիմնվեց նրա ծննդավայրում՝ ԼՂ Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում՝ հարևանությամբ այն դպրոցի, որն ավարտել էր նա: Հանդիսավոր արարողությամբ՝ համալսարանականների նախաձեռնությամբ նորոգված ու արդիական միջոցներով կահավորված 9-րդ դասարանը կոչվեց Նորայր Մարությանի անունով:

Մարտի 20-ին՝ վերադարձի օրն էլ համալսարանականները Բերձորում «Զորավիգ լինենք հայոց պետությանը» կարգախոսով հանդիսավորությամբ հիմնեցին Հայաստանի անկախության 25-ամյակի պուրակը:

ԱԿԱՆԱՏԵՍ

---

ՍՈՆԱ ՀՈՎԵՅԱՆ – ԲՈՒՆԻԱԹՅԱՆ
ՀՀ ժուռնալիստների միության անդամ

# ՄԱՐԴ, ՈՎ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՈՂՋ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻՆ„

Այսպես է ասել ականավոր բժիշկ, ամերիկահայ բարերար «Արփեն. Մայր ու նորածին» կենտրոնի հիմնադիր Քերոլան Նաջարյանը և այդ հրաշամարդու մասին իր բնութագրումը շարունակել. «Նա մի անհատ է, որ փոխում է ուրիշների կյանքը, ազդում է դեպքերի ընթացքի վրա իր ուժգին նվիրումով» (**Նաջարյան Ք.**, Կանչ հայրենի տնից, Եր., 2000, էջ 253): Իսկ ինչո՞ւ երախտիքի խոսք չասել այն մարդուն, ով արդեն երկու տասնամյակից ավելի, կարելի և

անկարելի ամեն միջոց գործադրելով՝ իր բարեսիրական գործունեությամբ նոր պայմաններ է ստեղծում ազատագրված Քաշաթաղում և Արցախի մյուս շրջաններում...Այսօր շատ բարեգործություններ նման են արհեստական ծաղկի կամ անհաջող պատվաստման: Պարզապես չեն կպչում: Նրանը, որպես բարություն, իսկականն է, բնականը: Գուրգեն Մելիքյան. «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» ղեկավար: Չգիտեմ՝ նրան ներկայացնելու հարկ կա՞: Կամ թվարկածներիցս ո՛րն է առաջնայինը, պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի բազմահմուտ ղեկավա՞րը, լեզվաբան-գիտնակա՞նը, բարեգո՞րծը, մարդասերն ու բնասե՞րը, հայրենիքի նվիրյալ զինվո՞րը...

Իսկ ինչո՞ւ զինվորը, որովհետև զինվոր պիտի լինել, որպեսզի արցախյան պատերազմի առաջին իսկ օրերից (այդքա՞ն ժամփա կտրելով) կարողանալ հասնելու և օգնելու բազմազավակ կարիքավոր ընտանիքների, նրանց ովքեր պապենական ազատագրված հողն են ծաղկեցնում:

Իր օգնականի՝ անխոնջ Աշոտ Պողոսյանի հետ հասցնում են նորածնին սպասող հղի մորը, ապրուստի կարոտյալին, վճարում՝ չունևոր ուսանողի ուսման վարձավճարը...Եվ դա՝ Քաշաթաղի ազատագրման ու վերահայացման առաջին իսկ օրերից:

- Միայն հարգանք ու սեր նրա հանդեպ...Նա մեզ համար, մեր երեխաներին մեծացնելու գործում երախտագիտության խորհրդանիշ է՝ մեծարանքի արժանի,- ասում են քաշաթաղցի մայրեր Վիկտորյա Թևանյանը, ով իր որդուն՝ Նարեկին ծննդաբերել է Չայլուից Ստեփանակերտ բռնագաղթի ճանապարհին: Ինչպես նաև՝ Քրիստինեն, Էմման, Աիդան, նաև Սերգեյի ու Մանուկի ընտանիքները, տուն-տեղ կորցրած, բռնագաղթված ուրիշ շատ ընտանիքներ:

... Նրան հիշում եմ դեռ 1960-ականների պետական համալսարանից: Ազնվական ու վեհ տեսքով, բարի աչքերով: Բոլորի ուշադրության կենտրոնում էր: Ուսանողական միջոցառումների կազմակերպիչ, ակտիվ ու նախաձեռնող:

Վերջերս էլ հռչակավոր միկրոքանդակագործ, ջութակահար Էդ. Տեր-Ղազարյանի «Իմ կյանքը» գրքում կարդացի, որ երբ միասին Թեհրան են մեկնել՝ Իրանի Իսլամալամն Հանրապետության նախագահ Ռաֆսանջանիի մոտ եղել է նրա թարգմանիչը: «Պարսկաստանում շահի շքեղ, սպիտակ մարմարից կառուցված պալատ մտանք Գուրգենի հետ, այդ շատ լավ մարդու, մեծ, սև աչքերով, երկար, թավ բեղերով»,- գրում է նա:

Իսկ տարիներ անց, երբ Բերձորում ամուսնու հետ մեզ ընթրիքի հրավիրեց, հարցրի, թե որտեղից են նրա գթասրտության ակունքները, ասաց.

- Եթե հարևանդ մեռնում է քաղցից, դու՝ շատակերությունից, դրա օգուտը ո՞րն է: Չէ՞ որ երկուսդ էլ մեռնում եք: Միայն իրար օգնելով կարելի է փրկվել:

Իսկ գթասրտությունը գալիս է նախնիներից ու ընտանեկան ավանդույթներից՝ ժառանգականորեն: Հիշեց նաև աստվածաշնչյան այս տողը. «Ով որ բարին գիտենա ու չանի, նրա համար մեղք է»: Երբեք չի մոռանում, որ այս ազգի քրիստոնյա զավակն է և ձգտում է, որ քաշաթաղցին հնարավորնս քիչ դժվարություններ ունենա:

Այս պահին հանգուցյալ ամուսնու՝ Արցախում իր ողջ մասնագիտական ու մարդկային կարողությունները անմնացորդ ներդրած բժիշկ Արցախ Բունիաթյանի հիշատակի առջև կմեղանչեի, եթե չմեջբերեի 2002 թ. փետրվարին Գ. Մելիքյանին ուղղված նրա նամակից մի հատված՝ «-Դուք ծնվել եք տիեզերքի բարի սերմերը մարդկանց սրտերում աճեցնելու համար: Ձեր բարի գործերով այդ սերը սփռում եք ամենուր՝ Սփյուռք-Հայաստան-Արցախ ճամփեքով: Լինելով նվիրյալ բարեգործ՝ մտահոգված եք, որ հենց մոր արգանդում մեր ապագա սերունդը առողջ մեծանա: Իմանալով, որ թերսնվածությունը ավերում է թե՛ մարմինը և թե՛ հոգին: Բարի մարդիկ սակավ են, ովքեր բարի կենսահոսանքներ են ներարկում, շրջապատում, և դրանով էլ՝ անսպառ գանձեր ունեն իրենց հոգում՝ լինելով Աստծո թարգմանիչ:Դուք հենց այդ մարդկանցից եք»: Եվ վերնագրել էր «Բարության ասպետը»:

Օրերս էլ նա համալսարանական ուսանողական հերթական խումբն էր ծառատունկի բերել Բերձոր: Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված այս հարյուր ծառերը խորհրդանշեցին հայի հարատևությունը և ազատագրված այս հայաշունչ տարածքի շենացումը: Վարչական այս շրջանի հիմնադրման առաջին իսկ տարիներից նրա նախաձեռնությամբ Բերձորի հարակից տարածքներում ու Կովսականում բազմաթիվ պուրակներ են հիմնվել՝ նվիրված համալսարանին, Մոնթե Մելքոնյանին, բարոնուհի Քոքսին... Ամեն ծառատունկ վերածվում է սրբազան ծեսի՝ Սյուրմելյանի «Ասացվածք ծառ տնկելու մասին» բանաստեղծությունն արտասանելով ու կարմիր գինի ըմպելով. «Մեռելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի»,- ասում է պաթոսով, և նրա ամեն մի ելույթ մարդկայնության մի դաս է բոլորիս համար, ու համոզված եմ ես, որ նա կրթում է հասուն քաղաքացի...

Ե՛ս չէ, որ պիտի ասեմ՝ մարդն է երկիր պահում ու նրա նմաններն են նպաստում երկրի կայացմանը:

Այսօր այդպես են գործում նաև Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը և այլ պետական այրեր:

Իսկ ռազմավարական առումով Քաշաթաղի շրջանի առավելության մասին ավելորդ է խոսել: Զուր չեն ասում՝ ով տիրում է Շուշիին, նա կտիրի Արցախին: Իսկ Բերձորը երկրորդ Շուշին է:

«Երբ ուսանողների հետ ծառեր եմ տնկում, ուզում եմ ողջ աշխարհը գեղեցիկ վայր դարձնել»,- ասում է:

Ուր էլ եղել է՝ կառավարական միջոցառումներ, գրքերի շնորհանդեսներ, հոբելյանական տոներ, հեռուստաեթերներ, այցեր զորամասեր ու Եռաբլուր, ամենուր զգացվել է նրա հանդեպ պատկառանքը, որովհետև ոչինչ հենց այնպես չի լինում:

Մարդկությունը սիրում է նրան՝ ով սիրում է մարդկանց:

Հ.Գ. – Կարևոր եմ համարում նաև նշել՝ գուցե ավելի հեշտ է սեփական գրպանից տալ, քան թե մեծահարուստին հավատ ներշնչել՝ նվիրաբերելու ունեցածի թեկուզ չնչին մասը:

Պրն Մելիքյան,

Խնդրում ենք Քաշաթաղի շըրանի Բերձոր քաղաքի գրադարանը նույնպես ընդգրկեք Բարեգործի ընթերցողների ցուցակում:

# Ստացված օգնություններ

22.10.2015թ. - 11.07.2016թ. Սկիզբը՝ նախորդ համարներում:

| Հ/հ | Ամսաթիվ | Ազգանուն, անուն | Նպատակը | Գումարը՝ ՀՀ դրամ, $ |
|---|---|---|---|---|
| 207 | 22.10.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Իմ սիրելի ընկեր Լենդրոշ Առյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20000 |
| 208 | 06.11.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր, Մարաշելյան Ալիս Գևորգի | 47750 |
| 209 | 06.11.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր, դոկտոր պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննեսյանի արևշատության համար, նվիրված նրա 85-ամյակին , նոյեմբեր 2015 | 20000 |
| 210 | 06.11.2015 | Մելիքյան Գուրգեն | օգնություն ծառերի ծրագիր , Իմ սիրելի ուսանող Վարուժան Գեղամյանի հայրիկի ՝ Գեղամ Գեղամյանի հիշատակին ի փոխանց ծաղկեպսակի , 30.10.2015 | 20000 |
| 211 | 06.11.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր, Ալբերտ Զախարյանի հիշատակին ի փոխանց ծաղկեպսակի 29.10.2015 | 20000 |
| 212 | 06.11.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր, համալսարանական ընկերոջս Լյովա Սարգսյանի հիշատակին ի փոխանց ծաղկեպսակի 28.10.2015 | 20000 |
| 213 | 06.11.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնութ. ծառերի ծրագիր, Ռոզա մայրիկի հիշատակին ի փոխանց ծաղկեպսակի 03.09.2015 | 20000 |
| 214 | 06.11.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր, Լուսիկ մայրիկի (Լուսիկ Մինասյան) հիշատակին ի փոխանց ծաղկեպսակի 05.11.2015 | 20000 |
| 215 | 07.11.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր , Սիրելի Ավետիս Բաղդամյանի հիշատակին ի փոխանց ծաղկեպսակի 08.03.2015 | 20000 |
| 216 | 16.12.2015 | GURGEN MELIKYAN MULTICHIL-DREN FAMLYFOUNDATION OF KASHATAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203-2324 | /RFB/161668260//DONATION COW PROGRA M POP OTHER /DONATION | 2418300 |
| 217 | 22.12.2015 | GURGEN MELIKYAN MULTICHIL-DREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203-2325 | /RFB/161668260//DONATION COW PROGRA M POP OTHER /DONATION | 2155365 |
| 218 | 25.12.2015 | Արզոյան Հրաչ | Օգնություն Arzoyan Hrach - 100USD | 48046 |
| 219 | 25.12.2015 | Ավագյան Մուշեղ | Օգնություն Avagyan Mushegh & Gayane -200USD | 96092 |
| 220 | 25.12.2015 | Բադալյան Սուրեն | Օգնություն Badalian Sooren - 200USD | 96092 |
| 221 | 25.12.2015 | Բադալյան Սարգիս | Օգնություն Badalyan Sarkis & Aida | 96092 |
| 222 | 25.12.2015 | Բաղումյան Վարուժ | Օգնություն Baghumyan Varujh - 200USD | 96092 |
| 223 | 25.12.2015 | Բալյան Միսակ | Օգնություն Balyan Misak - 150USD | 72069 |
| 224 | 25.12.2015 | Կյուրեղյան Վարուժ | Օգնություն Kyureghian Varujh & Emma | 72069 |
| 225 | 25.12.2015 | Զարգարյան Վիգեն | Necklace Zargarian Vigen - 30USD | 14580 |
| 226 | 25.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր սիրելի մայր Սեթարեմախմալ Ամիրյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/18.05.2009/ | 20000 |
| 227 | 25.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Համայակ Ամիրյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/10.12.2015/ | 20000 |
| 228 | 25.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Վերոնիկա Սուքիասյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/18.12.2015/ | 20000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 229 | 25.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝Վահան Նազարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/01.08.2015/ | 20000 |
| 230 | 25.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Եկատերինա մայրիկի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/25.12.2015/ | 20000 |
| 231 | 25.12.2015 | Ներսիսյան Էդվարդ | Օգնություն Nersisian Edward & Karine - 100USD | 48600 |
| 232 | 25.12.2015 | Էդվին | Օգնություն Edwin - | 48600<br>100USD |
| 233 | 25.12.2015 | Սարգսյան Ստեփան | Օգնություն Sargsyan & Martirossyan Stepan & Nelly - | 72900<br>150USD |
| 234 | 25.12.2015 | Քուշերյան Վարդուհի | Օգնություն Kusherian Varduhi & Katia – 200 USD | 97200 |
| 235 | 25.12.2015 | Սանամյան Արմեն | Օգնություն Sanamian Armen - 200USD | 97200 |
| 236 | 25.12.2015 | Վարդանյան Ֆրեդերիկ | Օգնություն Vartanian Frederick-225USD | 109350 |
| 237 | 25.12.2015 | Եղյանց Մաթիլդա | Օգնություն Yegiants George & Matilda - 250USD | 121500 |
| 238 | 25.12.2015 | Լուսպարյան Հովհաննես | Օգնություն Lusparyan Oganes -300USD | 145800 |
| 239 | 25.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Sanday tennis club - 470USD | 228420 |
| 240 | 25.12.2015 | Ղևոնդյան Մասիս | Օգնություն Ghevondyan Masis – | 972000<br>2000 USD |
| 241 | 25.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Lottery tickets, carpets program Melikyan Gurgen – | 972000<br>2000 USD |
| 242 | 25.12.2015 | Կյուրեղյան Վարուժ | Օգնություն Kyreghyan Varujh & Emma - 2000USD | 972000 |
| 243 | 28.12.2015 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր սիրելի Մամաջանով Ալեքսանդրի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/07.03.2015/ | 20000 |
| 244 | 28.12.2015 | Տոնոյան Արտակ | Չվերադարձված հողի գումար /Տոնոյան Արտակ, Տոնոյան Գայանե/ | 50000 |
| 245 | 11.01.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Ասյա Հովսեփյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20000 |
| 246 | 11.01.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն նկարների ծրագիր VarujhKyureghian - | 241000<br>500USD |
| 247 | 11.01.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Saro Shahnazari - 713.63USD | 343970 |
| 248 | 11.01.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Varujh Kyureghian - | 482000<br>1000 USD |
| 249 | 15.01.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր սիրելի Կարեն Ղազարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20000 |
| 250 | 18.01.2016 | GURGEN MELIKYAN MULTICHIL-DREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH330 N BRAND BLVD STE 155GLENDALE CA 91203-2324 | /RFB/163890010//STUDENT TUITION EDU CATION FUND POP OTHER/DONATION, EDU CATION AID | 2181330 |
| 251 | 19.01.2016 | Մելիքյան Գուրգեն | օգնություն Tumanyan Raffi and Astghik 700 USD | 338450 |
| 252 | 26.01.2016 | ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՀԵՌ-093196666 | ԳՐՔԻ ԳՈՒՄԱՐ, ԲԱՌԱՐԱՆ, ՎՃԱՐՈՂ՝ Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ | 20000 |
| 253 | 26.01.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր սիրելի Հեքիմյան Հրանուշ- Սրբուհու (Նուշիկի) հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20000 |
| 254 | 01.02.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանի հիշատակին, Մելիքյանի ընտանիքից՝ ի փոխան ծաղկեպսակի | 20000 |
| 255 | 05.02.2016 | GURGEN MELIKYAN MULTICHIL-DREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203-2324 | /RFB/165337206//DONATION COW AND STUDENT AID POP OTHER/DONATION | 4185485 |
| 256 | 10.02.2016 | Լևոն Սարգսյան | Օգնություն | 50000 |
| 257 | 19.02.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Խաչատրյան Արտուշ | 1230000<br>2500 USD |
| 258 | 19.02.2016 | Սանամյան Սամվել | Օգնություն ուսման ծրագիր | 300000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 259 | 19.02.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Վահե Գեղամի Ավետիսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /17.02.2016թ/ | 20000 |
| 260 | 19.02.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝Կարեն Ղազարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /13.01.2016թ/ | 20000 |
| 261 | 02.03.2016 | Զանգոզյան Վարդան | Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Աշոտ Ազարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի/11.02.2016թ/ | 74000<br>150 USD |
| 262 | 02.03.2016 | Մելիքյան Վահագն | Օգնություն ծառերի ծրագիր՝իմ անսահման սիրելի ուսուցչապետ Պետրոս Հովհաննիսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /24.02.2016թ/ | 20000 |
| 263 | 02.03.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեծ հայրենասեր ընկերոջս՝ Պետրոս Հովհաննիսյանի հիշատակին՝ ի փոխանծաղկեպսակի/24.02.2016թ/ | 20000 |
| 264 | 02.03.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Աստրյան Միշայի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /15.02.2016թ/ | 20000 |
| 265 | 04.03.2016 | Աննա Ստեփանյան , անձնագիր AF0680303 | Հիմնադրամին չվերադարձված հորթի դիմաց վճարում | 50000 |
| 266 | 04.03.2016 | GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203-2324 | /RFB/167440088//DONATION UNIVERSITY STUDENT HELP POP OTHER/DONATION | 2450000 |
| 267 | 18.03.2016 | Մելիքյան Գուրգեն | Ծառերի ծրագիր՝ մեր սիրելի Աղասի Թամազյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /12.08.2015թ/ | 20000 |
| 268 | 21.03.2016 | Գաբրիելյան Դերենիկ | Օգնություն ծառերի ծրագիր | 25000 |
| 269 | 01.04.2016 | ԵՊՀ հիմնադրամ | Ֆինանսական աջակցություն | 350000 |
| 270 | 01.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգն. ծառերի ծրագիր՝ սիրելի Հենրի Վարդանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /24.03.2016թ/ | 20000 |
| 271 | 01.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգն. ծառերի ծրագիր՝ սիրելի Օֆելյա Գրիգորյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /24.03.2016թ/ | 20000 |
| 272 | 05.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն փախստականներին՝ Հակոբ Գույումջյան - | 144000<br>300 USD |
| 273 | 05.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ԽԵԱ ծրագիր՝ Jan Sirapian- | 243900<br>450 EUR |
| 274 | 05.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն փախստականներին՝ Toney Kave - 500USD | 240000 |
| 275 | 06.04.2016 | GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLYFOUNDATION OF KASHATAGH 330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203-2324 | /RFB/169862846//DONATION TREE PROJE CT POP OTHER /DONATION TREE PROJECT | 2410050<br>5000USD |
| 276 | 07.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Նավարշ Նահվերդյան - 500USD | 243000 |
| 277 | 12.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Նելլի մայրիկի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /11.04.2016թ/ | 20000 |
| 278 | 12.04.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Ալֆրեդ Բաբախանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /10.04.2016թ/ | 20000 |
| 279 | 03.05.2016 | 1/COWANSVILLE HOLDINGS LIMITED 1/ROAD TOWN, TORTOLA 6/CH/UBS/0206-00161878 | /RFB/ZD81124TI90004674//CHARITY | 9560230<br>19980 USD |
| 280 | 03?05?16 | GURGEN MELIKIAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHA-TAGH 330 N BRAND BLVD STE 155 GLEDALE CA 91203-2324 | /RFB/171917516//COW PROGRAM FRO MULTICHILDREN FAMIPOP OTHR /DONATION, COW PROGRAM | 2392450<br>500 USD |
| 281 | 06.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ շատ սիրելի Ժակի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /04.05.2016թ/ | 20000 |
| 282 | 06.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգն. ծառերի ծրագիր՝ պետական այր Իշխան Մարտիրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /23.04.2016թ/ | 20000 |
| 283 | 06.05.2016 | Մուշյան Հակոբ | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Ժակի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի Մերի և Հակոբ Մուշյաններից /04.05.2016թ/ | 20000 |
| 284 | 06.05.2016 | Մարաշլյան Գևորգ | Ծառերի ծրագիր՝ սիրելի եղբոր Իշխան Մարտիրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի Գևորգ և Վարդիթեր Մարաշլյաններից /23.04.2016թ/ | 96200<br>200 USD |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 285 | 17.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Դիրքապահ զինվորների ուսման ծրագիր Manik Saakyan - | 143400<br>300USD |
| 286 | 17.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ընկերոջս՝ մեծ հայրենասեր Նորիկ Գալստյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /13.06.2016թ/ | 20000 |
| 287 | 17.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝սիրելի Սիմեոն Տիգրանի Հախումյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /18.05.2016թ/ | 20000 |
| 288 | 26.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝խաչի և զենքի մարդ, անմոռանալի Տեր Գրիգորի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /24.05.2016թ/ | 20000 |
| 289 | 26.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր շատ սիրելի Սոնյա մայրիկի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /22.05.2016թ/ | 20000 |
| 290 | 31.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Ծառերի ծրագիր՝Խանում Աֆատի Բեյզադի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /03.04.2016թ/ | 20000 |
| 291 | 31/0516 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝Ալի Ղասեմիֆարդի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /06.09.2015թ/ | 20000 |
| 292 | 31.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝Մեհդի Մոհամադի Բերենջեգանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /28.01.2016թ/ | 20000 |
| 293 | 31.05.2016 | Մելիքյան Գուրգեն | Ծառերի ծրագիր՝մեր շատ սիրելի Մարատի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /22.05.2016թ/ | 20000 |
| 294 | 31.05.2016 | Բալյան Հարութ- Րաֆֆի | Դիրքապահ զինվորների ուսման վարձ, Harout - Raffi Balyan | 142800-<br>300USD |
| 295 | 31.05.2016 | Կյուրեղյան Վարուժ | Զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների օգնություն, Varouj Kyureghyan – | 2856000<br>6000 USD |
| 296 | 13.06.2016 | Խաչատրյան Սուրեն | Օգնություն ԽԵԱ ծրագիր | 320000 |
| 297 | 13.06.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ԽԵԱ ծրագիր | 440000 |
| 298 | 14.06.2016 | Քաբաբչիյան Մաստեռ Կարո | Օգնություն | 100000 |
| 299 | 14.06.2016 | Մելիքյան Գուրգեն | Tree project Mimi Zarookian in the memory of Kris Ashot Mardian | 48100<br>100USD |
| 300 | 14.06.2016 | Մելիքյան Գուրգեն | Tree project Mimi Zarookian in the memory of Alfred Babakhanian – | 48100<br>100 USD |
| 301 | 16.06.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ իմ անչափ սիրելի տաղանդաշատ հայրենասեր Միեր Դավոյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /01.06.2016թ./ | 20000 |
| 302 | 28.06.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Արտակ Եգեկյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /26.06.2016թ./ | 20000 |
| 303 | 28.06.2016 | Պետրոսյան Էդդի | Tree project for Norik & Valia Petrossian /Vancoover, Canada/ from Eddie Petrossian - 100USD | 47900 |
| 304 | 07.07.2016 | RAFIK BOROIAN HUGES VAG 177540 UPPSALA | BOROIAN FAMILY, KHOSHOR YEGHJRAVOR TSRAGIR | 343389<br>720USD |
| 305 | 07.07.2016 | SHAHNAZARIAN, HESJUTOMTAVAGEN 15 B 756 46 UPPSALA | TRANSFER FROM SWIFT | 348158<br>730USD |
| 306 | 11.07.2016 | Փիլոսյան Վաղարշակ | Օգնություն ԽԵԱ ծրագիր, Վաղարշակ և Սիլվա Փիլոսյաններ - | 334950<br>700 USD |

Ընդամենը՝ 42 791 979

***Գուրգեն Մելիքյանի՝Քաշաթաղի բազմազավակ ընիմնադրամի կողմից 15.01.2016-01.07.2016 վճարված ուսման վարձերի ցուցակ***

| Հ/հ | Ուսանողի ազգանուն, անուն | Գումարը՝ ՀՀ դրամ | Կրթական հաստատությունը | նպատակը | Փոխանց. ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արզումանյան Հռիփսիմե | 50000 | Հայաստանի ազգային ագրար. համալս. | Օգնություն ուսման ծրագիր՝ բույսերի պաշտպ.2-րդ կուրս հեռակա | 01.15.2016 |
| 2 | Մարտիրոսյան Տաթևիկ | 50000 | Հայաստանի ազգային ագրար. համալս. | Օգն. ըւս. ծրագիր՝ Սանիտար. փորձա-քննություն մագիստր1-ին կ. հեռակա | 01.15.2016 |
| 3 | Կարապետյան Արթուր | 50000 | Հայաստանի ազգ. ագրար. համալս. | Օգնություն ուսման ծրագիր՝ գյուղմեքենայացում 5-րդ կուրս հեռակա | 01.15.2016 |
| 4 | Մկրտչյան Նարե | 50000 | Խ. Աբով.անվ. պետ. մանկավարժ. հմլս. | Օգն. ըւս. ծրագիր՝ օլիգոֆրենոմանկա վարժություն,3-րդ կ.հեռակա | 01.15.2016 |
| 5 | Կարապետյան Մարիամ | 50000 | Արցախի պետական համալսարան | Օգնություն ուսման ծրագիր՝ նախազո-րակոչ. և ֆիզպատր..3-րդ կ, հեռակա | 01.15.2016 |
| 6 | Գրիգորյան Մերի | 50000 | Արցախի պետական համալսարան | Օգնություն ուսման ծրագիր՝ մանկա-վարժ. և մեթոդիկա,1-ին կուրս հեռակա | 01.15.2016 |
| 7 | Սարգսյան Ռոմիկ | 50000 | Արցախի պետական համալսարան | Օգնություն ուսման ծրագիր՝ նախազո-րակոչային պատր.4-րդ կուրս հեռակա | 01.15.2016 |
| 8 | Սարգսյան Արտյոմ | 50000 | Արցախի պետական համալսարան | Օգնութ. ուսման ծրագիր՝ իրավագիտ. 1-ին կուրս հեռակա | 01.15.2016 |
| 9 | Բունիաթյան Ջոան | 50000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնութ. ուսման ծրագիր՝ միջազգ հա-րաբեր. ֆակ., 5-րդ կուրս, հեռ. | 01.15.2016 |
| 10 | Բագրատույան Սուսաննա | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնութ. ուսման ծրագիր՝ ռուս բանասիր. ֆակուլտետ, 4-րդ կուրս | 01.19. /2016 |
| 11 | Եղիկյան Նոյեմի, | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր՝ պատմ. ֆակ., 4-րդ կուրս հեռակա | 01.21.2016 |
| 12 | Մնացականյան Մարիամ | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգն. ուսման ծրագիր՝տնտես. ֆակ., կառավար.4-րդ կուրս հեռակա | 01.21.2016 |
| 13 | Քեխյան Անուշ | 120000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր՝ արևելա-գիտ. ֆակ., թուրքագիտություն 1-ին կ. | 01.21.2016 |
| 14 | Բաբայան Շողեր | 150000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգն. ուսմ. ծրագիր՝ միջազգ. հարաբ. ֆակ.,3-րդ կուրս, հեռակա | 01.21.2016 |
| 15 | Աբգարյան Վիկտորյա | 150000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր՝ մաթեմա-տիկայի և մեխանիկա ֆակ., 4-րդ կուրս | 01.21.2016 |
| 16 | Ավագյան Էլեն | 150000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր՝ հայ բա-նասիրության ֆակ.,3-րդ կուրս հեռակա | 01.21.2016 |
| 17 | Կատվալյան Էմմա | 200000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր՝, ռոմանա-գերմ. ֆակ., ԼՄՀ բաժին 1-ին կ. | 01.21.2016 |
| 18 | Մինասյան Տաթևիկ | 200000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգն. ուսմ. ծրագիր՝ աշխարհագր. և երկրաբ. ֆակուլտետ ֆակ., 4-րդ կուրս | 01.21.2016 |
| 19 | Քյարունց Անի, | 200000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր՝ հայ բանասիրության ֆակ., 3-րդ կուրս | 01.21.2016 |
| 20 | Բաղդասարյան Նարա | 100000 | Արցախի պետական համալսարան | Օգն. ըւս. ծրագիր՝ բանասիր. ֆակ., ռուսաց լեզու և գրական., 1-ին կուրս | 01.21.2016 |
| 21 | Բարոյան Դավիթ | 100000 | Հայաստանի պետ. ճարրպետաշին հմլս. | Օգն. ուսման ծրագիր՝ ճարտարապետ. և դիզայնի ֆակ. 4-րդ կուրս | 01.21.2016 |
| 22 | Տեր-Սահակով Արսեն | 300000 | Հայաստանի պետ. ճարրպետաշին հմլս. | Օգնություն ուսման ծրագիր՝ ճարտարապետական ֆակ. 2-րդ կուրս | 02.19.2016 |
| 23 | Նահապետյան Սոնա | 30000 | ԵՊՀ հիմնադրամ | Դոկտոր Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ դեղագ. և քիմ. ֆակ., մագիստր. 2-րդ կ, .փետրվարի համար | 02.19.2016 |
| 24 | Հարությունյան Լիլիթ Վահրամի | 50000 | ՀՀ ազգ. ագրար. հմլս. Ստփկերտի մ/ճ | Օգն. ուսման ծրագիր՝ ագրարային ար-տադրությունէկոնոմիկա և կառավա-րում, 3-րդ կուրս մագ. հեռակա | 02.19.2016 |
| 25 | Խաչատրյան Սամվել Էդ. | 50000 | ՀՀ ազգ. ագրար. հմլս. Ստփկերտի մ/ճ | ագրոնոմիա 4-րդ կուրս հեռ, ուսման վարձ 2015-2016 ուս տարվա | 02.19.2016 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26 | Տաթևիկ Թադևոսյան | 50000 | Երևանի Վ.Բրյուսովի անվ. լեզվահսրկ հմլս. | Օգնություն ուսման ծրագիր` ,օտար լեզուներ ֆակ., անգլ.լեզու 1-ին կուրս | 02.19.2016 |
| 27 | Աննա Խաչատուրի Մարգարյան | 50000 | ՀՀ ազգ. ագրար. հմլս. Ստփկերտի մ/ճ | Օգնություն ուսման ծրագիր` , Ագրոնոմիա, 4-րդ կուրս հեռակա | 02.19.2016 |
| 28 | Կիրակոսյան Լուսինե | 50000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` միջազգ. հարաբեր. 4-րդ կ. | 02.19.2016 |
| 29 | ` Բաղդասարյան Հրայր | 50000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր, արևել. ֆակ., արաբ 1-ին կուրս | 02.19.2016 |
| 30 | Ասոյան Միեր | 80000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` արևել. ֆակ., իրան., 1-ին կ. | 02.19.2016 |
| 31 | Ղարագյոզյան Տիգրանուհի | 80000 | Մ. Հերացու անվ.պետ. բժշկական համալս. | Օգնություն ուսման ծրագիր` ընդհ. բժշկություն 5-րդ կուր | 02.19.2016 |
| 32 | Կիրակոսյան Օֆելյա Արմ. | 84000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` ,իրավագիտ. ֆակ. մագիստր. | 02.19.2016 |
| 33 | Սարգսյան Տիգրանուհի Է. | 90000 | ԵՊՀ հիմնադրամ | Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ- հայ բա-նասիր. ֆակ. 3-րդ կ., դեկտեմբեր, հունվար, փետրվար | 02.19.2016 |
| 34 | Մարգարյան Հովհաննես | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` արևել. ֆակ., արաբագիտ.1-ին կուրս | 02.19.2016 |
| 35 | Ղազարյան Սարգիս | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգն. ուսման ծրագիր` պատմ. ֆակ., կովկասագիտ բաժին, 1-ին կուրս | 02.19.2016 |
| 36 | Ամիրյան Նարեկ | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` ընդհանուր բժշկություն 4-րդ կ. | 02.19.2016 |
| 37 | Աղաջանյան Անի | 100000 | Մ. Հերացու անվան պետ. բժշկական հմլս. | Օգն. ուսման ծրագիր` բուժական գործ ֆակ.5-րդ կուրս | 02.19.2016 |
| 38 | Ավագյան Միեր | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` արևել. ֆկ., իրանագիտ., 1-ին կ. | 02.19.2016 |
| 39 | Վարդանյան Տաթևիկ Էդմոնդի | 80000 | Գրիգոր Նարեկացի համալսարան | Օգնություն ուսման ծրագիր` հայոց լեզու և գրակ. ֆ., հեռակա 4-րդ կուրս | 03.03. 2016 |
| 40 | Յուխանով Արման | 88000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` ռոմանագերմ. 2-րդ կուրս հեռակա | 03.18. 2016 |
| 41 | Իգիթյան Սվետլանա | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` պատմության ֆակ. 2-րդ կուրս | 03.18. 2016 |
| 42 | Հովհաննիսյան Վահե | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` ,տնտես. և կառավարում,մագ. 2-րդ կուրս | 03.18. 2016 |
| 43 | Եսոյան Լուիզա | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` միջազգային հարաբ. 3-րդ կուրս | 03.18. 2016 |
| 44 | Ռոտակյան Ռիմմա | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` միջազգային հարաբ. 3-րդ կուրս | 03.18. 2016 |
| 45 | Վանցյան Շուշանիկ | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուս ծրագիր` ռուս բա-նասիրության ֆակ. 3-րդ կուրս | 03.18. 2016 |
| 46 | Բաբաջանյան Ադանա | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` Ժուռնալ. ֆակ. 2-րդ կուրս | 03.18. 2016 |
| 47 | Սարգսյան Տիգրանուհի Է. | 30000 | ԵՊՀ հիմնադրամ | Խտ. Ալաջաջյան կրթաթոշակ. հայ բանասիր ֆակ. 3-րդ կուրս, մարտ ամ | 03.18. 2016 |
| 48 | Նահապետյան Սոնա | 30000 | ԵՊՀ հիմնադրամ | Դոկտոր Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ - դեղագ. և քիմ. ֆակ., մագ. դեղագիտության 2-րդ կուրս, մարտ ամսվա համար | 03.18. 2016 |
| 49 | Մկրտչյան Քրիստինե | 100000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր` ռոմանագերմանական ֆակ. անգլ. լեզու և գրակ. 2-րդ կուրս | 03.18. 2016 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 50 | Սարգսյան Տիգրանուհի Էդուարդի | 60000 | ԵՊՀ հիմնադրամ | Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ հայ բանասիրական ֆակ. 3-րդ կուրս, ապրիլի, մայիսի համար | 05.06. 2016 |
| 51 | Նահապետյան Սոնա | 60000 | ԵՊՀ հիմնադրամ | Դոկտոր Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ՝ դեղագ. և քիմ ֆակ., մագիստ. 2-րդ կուրս, ապրիլ, մայիս | 05.06. 2016 |
| 52 | Համբարձումյան Լիլիթ Ս. | 105000 | Արցախի պետական համալսարան | Օգն. ուս. ծրագիր՝ մանկավարժություն, 4-րդ կուրս հեռակա | 05.06. 2016 |
| 53 | Գրիգորյան Համիկ Պավելի | 73000 | ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մ/ճ | Օգնություն ուսման ծրագիր՝ կիրառ. արվեստ 4-րդ կուրս | 05.13. 2016 |
| 54 | Քոսակյան Սերգեյ Յուրիյկի | 50000 | ՀՀ ազգ. ագրար. հմլս.Ստփկերտի մ/ճ | Օգնութ. ուսման ծրագիր՝ ագրարային տնտեսագիտություն2-րդ կուրս | 05.31. 2016 |
| 55 | Մաղոյան Սիրանուշ | 275000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն ուսման ծրագիր՝ արևելագիտության ֆակ. արաբագիտություն 3-րդ կուրս | 06.06 2016 |
| 56 | Սարգսյան Տիգրանուհի Էդուարդի | 30000 | ԵՊՀ հիմնադրամ | Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, հայ բանասիրական ֆակ. 3-րդ կուրս, հունիս ամսվա համար | 06.09 2016 |
| 57 | Նահապետյան Սոնա | 30000 | ԵՊՀ հիմնադրամ | Դոկտոր Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ՝ դեղագ. և քիմ ֆակ., մագիստ 2-րդ կուրս, հունիսի համար | 06.06 2016 |
| 58 | Ասոյան Միեր Թաթուլի | 60000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգն. ուսմ. ծրագիր՝ արևելագիտության ֆակլթյուրքագիտություն 2-րդ կուրս | 06.06 2016 |
| 59 | Աղոնց Հովհաննես Վարդանի | 30000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգն. ուսմ. ծրագիր՝ միակողմ. ծնողազ-ուրկ, դեղագ.և քիմ. ֆակ. 1-ին կ. | 06.06 2016 |
| 60 | Մելքոնյան Ռոզա Ժորայի | 50000 | ԵՊՀ հիմնադրամ | Օգն. ուսման ծրագիր՝ պատմ. ֆակ., մշակութաբանություն 3-րդ կուրս | 06.14 2016 |

ÀÜ¸ ² Øº ÜÀ`   5 335 000